# ԵՄ հարկային քաղաքականության ռազմավարությունը

Նորայր Դանիելյան

# Ո՞րն է Եվրոպական Միության դերը հարկման գործում

- Եվրոպական Միությունը չունի հարկեր հավաքագրելու իրավասություն: Այս իրավասությունը Անդամ պետություններինն է:

- Եվրոպական Միությունն ունի անուղղակի հարկերի իրավասություն, իսկ Անդամ պետությունները վետոյի իրավունք հարկային բնագավառի խնդիրների վրա:

# Անուղղակի հարկումը

- Հարկային քաղաքականությունը պետք է ապահովի, որ մրցակցությունը Անդամ պետությունների միջև ներքին շուկայում չխեղաթյուրվի անուղղակի հարկերի դրույքաչափերի և հարկային համակարգերում առկա տարբերությունների հետևանքով:
- Անդամ պետությունների անուղղակի հարկերի դրույքաչափերի տարբերության ազդեցությունը ներքին շուկայի վրա:

# Եվրոպական Համձնաժողովի հարկային քաղաքականության ռազմավարությունը

- Եվրոպական Համձնաժողովը իր հաղորդման մեջ վերահաստատեց իր այն տեսակետը, որ Անդամ պետությունների հարկային համակարգերի ներդաշնակեցման կարիք չկա:
- Հիմք ընդունելով, որ նրանք հարգում են Համայնքի օրենքները, Անդամ պետությունները ազատորեն կարող են ընտրել իրենց հարկային համակարգը, ենթադրելով, որ նրանք կկիրառեն են իրենց գերակայություններին ամենահամապատասխանը:

# Արդյո՞ք առկա է ընդհանուր հարկային համակարգի անհրաժեշտությունը

- ✓ Ներդաշնակեցումը վերաբերում է Անդամ պետությունների ԱԱՀ դրույքաչափերի հավասարեցման գործընթացին:
- ✓ ԵՄ Միացյալ հարկային համակարգի ստեղծումը կարող է նպաստել ընդհանուր շուկայի գործելու արդյունավետության բարձրացմանը:

# ԿՈՂՄ փաստարկներ

- Համաձայնեցված հարկային համակարգը դադարեցնում է ավելի ցածր հարկեր ունենալու Անդամ պետությունների մրցակցությունը և նպաստում է  արդար ընդհանուր շուկայի գործողությանը:
- Դրամը և մարդիկ պետք է իրավունք ունենան հատելու Անդամ պետությունների սահմանները առանց կրկնակի հարկման:
- Առանց միասնական հարկային համակարգի Ընկերությունները, որոնք գործունեություն են ծավալում մի քանի անդամ պետություններում, հաճախ ենթարկվում են կրկնակի հարկման, ինչը խափանում է նրանց տնտեսական աճը:

# ԴԵՄ փաստարկներ

- Տարբեր Անդամ պետություններ ունեն տնտեսական տարբեր գերակայություններ. ոմանք կցանկանան ունենալ ցածր հարկեր ձեռնարկություններին խրախուսելու նպատակով, մինչդեռ մյուսները կցանկանան ունենալ ավելի բարձր հարկեր բարեկեցության և առողջապահական հոգածության խնդիրներ լուծելու համար:

- Պետությունները պետք է պահեն իրենց հարկային համակարգերի վերահսկման իրավունքը, որովհետև հարկեր հավաքագրելու իրավունքը կենտրոնական նշանակություն ունի ազգային ինքնիշխանության և որոշումների կայացման գործում: